

## Ս. ԹԱԴԷՈՍ-ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ ՄԱՏՈՒՌ

Ազեքսանդրիոյ թեմական շրջանակին մէջ, Տիսանիս գիւղին մէջ, ուր է հանգուցեալ Աբրահամ Փաշա Բարթողի աղարակը, կայ քարաշէն մատուռ մը, նուիրուած Ս. Թադէոս և Բարթողիմէոս Առաքելոց անուան: — Այս սրբավայրը կառուցուած է 1835—36 թուականին, հոգելոյս Գարբիէլ Եպիսկոպոսի Առաջնորդութեան օրով, ձեռամբ Կեսարացի Աբրահամ Վարժապետի կամ Խավակա Աբրահամի, որ, հօրեղբայր Աբրահամ Փաշա Բարթողի, ուսուցիչ էր եղած Պօղոս Պէյ Եռասուֆի, և անոր չնորհիւ Մէհմէտ Ալի Փաշայէ այդ գիւղին մէջ նուէր ստացած հողեր և բնակարան մը:

Յարդ կ'մնայ այս մատուռը. երբեմն կ'գործածուէր իբրև աղօթասեղի այդ աղարակին և շրջակայ գիւղերու պատանական հայ անցորդներու և մշակներու. հանդ. Աբրահամ Փաշա և իր բարեպաշտ Տիկինը, սարին անդամ մը, առաջին Լուսաւորչաց Տօնին օրը, Ազեքսանդրիայէն յատկապէս հրուսիրուած եկեղեցականաց միջոցաւ, պաշտամունք կատարել և Ս. Պատարագ մատուցանել կուտային հոն:

